

«Նարեկացի» արվեստի միություն
Երևան, 2026



Շուշի, Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի
Holy All Savior Ghazanchetsots Church of Shoushi

Բռնենք ճամփան Արցախի

Արցախյան երգեցիկ մշակույթին անդրադառնալու գաղափարը հասունացավ տարիների ընթացքում, երբ ճանաչեցինք թե՛ այդ երգը, թե՛ նրա բնօրրանը: Սկզբում դրանք ընդամենը 10-12 նմուշ էին:

Տարիների ընթացքում մենք ընտրել էինք աշխատանքի մի հատուկ ձև՝ ընտրել որևէ տարածաշրջան, գտնել այդ շրջանից պահպանված երգերի և պարերի նմուշներ, ապա դրանցից կազմել ամբողջական համերգային ծրագրեր և ներկայացնել: Համերգային ծրագրերից բացի դրանք դառնում էին հոլովակներ և ձայնագրություններ: Այդպես ստեղծվեցին **«Կարմրավանքի երգ-պատմությունները»** երաժշտական ֆիլմը՝ կազմված Կարնո նմուշներից, Դերսիմ-Չմշկածագի երգեցիկ նմուշներից կազմված **«Մի բուռ երգ Մնձուրի լեռներից»** համերգային ծրագիրը և ձայներիզը, Համշենի մշակույթ ներկայացնող 3 համերգները և 2 ժամ տևողությամբ ձայնագրությունները, Կոմիտասի 150 ամյակին նվիրված համերգը և 12 ձայնագրությունները: Այնուհետև հերթը հասավ Արցախի երգերին:

Ծրագիրն ամբողջացնելու համար՝ սկսեցինք փնտրել ավելի շատ նմուշներ՝ բոլոր հնարավոր աղբյուրներն օգտագործելով: Այդ աղբյուրները տարբեր էին՝ սկսած ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվից, որտեղ գտնվող 100-ից ավելի նմուշներից մոտ տասնյակ երգ մեզ տրամադրեց ինստիտուտի ավագ գիտաշխատող, երաժշտագետ Մարիաննա Տիգրանյանը:

Քանի որ առանց Գուրգեն Գաբրիելյանի ստեղծած և մշակած նմուշների չէր ստացվի, ընդգրկեցինք նաև դրանք: Այնուհետև դիմեցինք արցախցի երգչուհի, արցախյան երգեցիկ

մշակույթի կրող Մադլեն Ասրյանին, երգիչ, բանահավաք Մարատ Հարությունյանին, մի քանի նմուշ իր բանահավաքչական աշխատանքներից տրամադրեց երաժշտագետ, կոմպոզիտոր Էլինար Շահենը: Ծրագրում ներառեցինք նաև կոմպոզիտոր Արտեմ Խաչատուրի և բանաստեղծ Ալեքսանդր Մանասյանի համատեղ երգերը՝ Արցախի բարբառով, և իհարկե աշուղ Բագրատի չափազանց սիրված **«Դերունց ծյորումը»**: Օգտվել ենք նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, արցախցի, Ստեփանակերտի պետական համալսարանի նախկին ռեկտոր Արմեն Սարգսյանի տրամադրած **«Արցախի ժողովրդագիտությունը»** մատենաշարի **«Բանահյուսություն»** հատորի նյութերից (Երևան 2023թ.):

Կան նմուշներ, որոնք ձայնագրվել են առաջին անգամ, կան նաև այնպիսիք, որ կատարվել են բազմիցս:

Մեր հիմնական նպատակը Արցախի բարբառով երգեր ընտրել և ներկայացնելն էր, և այս փնտրտուքների արդյունքում հավաքեցինք և պատրաստեցինք 36 երգ՝ *ծիսական, աշխատանքային, կենցաղային, հարսանեկան երգեր, սիրերգեր, օրորներ, կատակերգեր* և 1 *պարեղանակ*:

Ուսումնասիրելով արցախյան բարդ ու ինքնատիպ բարբառը, այդ բարբառով հնչող հնավանդ ու նորաստեղծ երգերը, ծանոթ լինելով արցախյան չքնաղ բնաշխարհին՝ փորձեցինք այդ բնաշխարհի ու երգի երանգները մատուցել մեր զգայարանների միջով անցկացնելով:

Ցավոք, արցախյան բնիկ շուրջպարերի նմուշներ մեզ չեն հասել, բացի ընդամենը մի քանի տարի առաջ Արցախում բնակված և ազգային երգ ու պարերի ուսուցանմամբ զբաղված Սարգիս Պարսամյանի ներկայացրած նմուշից, որի տեսագրությունը կարելի է գտնել համացանցում: Սակայն Արվեստի ինստիտուտի պահոցում կան արցախյան շուրջպարերի նոտաներ, որոնց պարաձևերը այսօր դժվար է ասել, թե ինչպիսին են եղել:

Դրանցից մեկը ներկայացված է որպես *Յայլի*, իսկ մյուսը՝ *Կանանց շուրջպար*: Իսկ ընդհանրապես ընդունված է ասել, որ Արցախին առավել բնորոշ են մենապարերն ու զուգապարերը: Այդ մեղեդիներից մեկը մենք կիրառել ենք Համբարձման երգի մեջ՝ նախ որպես միջնանվագ, ապա որպես զուռնայի պարեղանակ:

Արցախյան երգերն ունեն իրենց հատուկ ձայնեղանակներն ու ռիթմերը: Առավել տիպիկ է 6/8 չափը, իսկ 4/4 չափի մեջ ներկայացված նմուշները հորինված են, կարելի է ասել, վերջերս:

Էլինար Շահենի տրամադրած նմուշների մեջ հետաքրքրական էր շուշեցի տատիկի երգած մեղեդին, որի հիման վրա մենք ստեղծեցինք գորգի երգերը:

Զուգապարերի հիմքը մեծ մասամբ զուգերգերն են, քանի որ առանց երգի պար չէր կարող լինել:

Առանձին խոսելիք է աշխատանքի երգերի բաժինը՝ սկսած աննման հորովելներից, որոնցից 2 ինքնատիպ նմուշ տեղ են գտել մեր հավաքածուի մեջ, ինչպես նաև կալի, խնոցու, երկանքի, ճախարակի, գորգագործի ու հացթուխի երգերը: Սրանք ժողովրդի դառն ու ծանր կյանքի նկարագրություններ են:

Կարծրատիպ կա, որ հայկական նույնիսկ ամենաուրախ երգերը զերծ չեն տխրությունից: Այս երևույթը ակնհայտ է նաև արցախյան կատակերգերում: Այս առումով դժվար է երգերից շատերը դասակարգել կոնկրետ մեկ ժանրում:

Արցախյան երաժշտական բարբառը նույնքան ինքնատիպ է, որքան խոսակցականը, նաև այս առումով դրանք հստակ զանազանվում են այլ շրջանների երգեցիկ մտածողության դրսեվորումներից: Այն ընկալելու և հասկանալու համար ճանաչել ու սիրել է պետք:

Երգերը դասավորված են ըստ ժանրերի, տեսակների ու կիրառության:

Առաջին 13–ը ամբողջացվել են որպես հարսանեկան երգեր: 14-23-ը՝ աշխատանքի, արցախցու դառն ու դժվարին կյանքի եր-

գերն են: 24 և 25-ը օրորոցայիններ են: 26-ը՝ 2 մանկախաղացներից կազմված շարք է: Առաջին հատվածը («Պապալ պապալ էս տղան») Արվեստի ինստիտուտի հավաքածուից է, 22-րդը Էլինար Շահենը ձայնագրել է Շուշիում՝ շուշեցի մի տատիկից:

Հանրահայտ **«Նախշուն բաջին»** և «14»-ը ներկայացված են միասին, քանի որ նախապես ծրագիրը կազմվել է համերգային կատարման համար՝ որպես երաժշտական ներկայացում:

Նույն շուշեցի տատիկից ենք վերցրել նաև գորգի երգի առաջին՝ հանդարտ մասի մեղեդին՝ եղած անհասկանալի խաղիկները փոխարինելով *«Արցախի բանահյուսությունը»* գրքում եղած գորգի, կարպետի մանել-գործելու հետ կապված խաղիկներով:

Գյուլ-գյուլի կոչված սիրերգը Ռոմանոս Մելիքյանի մշակումով է եղել Մարիաննա Տիգրանյանի տրամադրած հավաքածուի մեջ՝ գրական հայերեն բանաստեղծական տեքստով, որը մեզ թույլ ենք տվել փոխարինել բարբառային ծաղիկներով, քանի որ մեր գերխնդիրը արցախյան բարբառով հնարավորինս շատ երգեր ներկայացնելն էր:

«Ղարաբաղն արև ըրվանա» սկզբնատողով գորգագործ կընոջ օրորը չենք զետեղել ոչ օրորների և ոչ էլ աշխատանքային երգերի շարքում, այլ **«Ղարաբաղը սարոտ ա»** սկզբնատողով նմուշից հետո՝ համարելով, որ սրանք իրենց տեսակով ու նշանակությամբ իրար մոտ են:

Աշուղ Ապայի երգը տեղադրել ենք որպես բնաբան՝ միայն բանաստեղծական տեքստը, քանի որ երգը բարբառով չէ:

Երգերը ներկայացված են միաձայն, մեներգային և խմբային կատարումներով, բնական (այդ թվում մանկական ձայներով), թեթև նվագակցությամբ՝ մեկ կամ մի քանի նվագարանով:

Լուսինե Նազարյան
«Նուբար» հայ ավանդական երգի-պարի
խմբի գեղարվեստական ղեկավար



Taking the Path to Artsakh

The idea of exploring Artsakh's rich singing culture matured over many years, growing deeper as we came to understand both the songs and the land of their birth. Initially, the study was limited to a foundational sample of just 10 to 12 pieces.

Over the years, we have developed a unique, region-based approach to our work. We select a specific region, track down surviving traditional songs and dances, and meticulously reconstruct them into complete concert programs. Beyond live performances, these curated materials are also preserved and produced as high-quality video recordings and audio albums. Thus, the musical film **"Songs and Stories of Karmravank"** was created-comprising excerpts from Karin, the concert program and CD **"A Handful of Songs from the Mndzur Mountains"** (featuring songs from Dersim-Chmshgatsag); three concerts, 2-hour recordings showcasing Hamshen culture, the concert dedicated to the 150th anniversary of Komitas, and 12 additional recordings. Then it was the turn of the songs of Artsakh.

To finalize the project, we gathered extra samples from a wide range of sources. We began our search at the archives of the Institute of Arts of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Senior researcher and musicologist Marianna Tigranyan, there provided us with approximately ten songs curated from a pool of over 100 samples.

Since this project would have been impossible without the samples created and developed by Gurgen Gabrielyan, we have included them as well. We also collaborated with Artsakh singer and bearer of Artsakh singing culture Madeleine Asryan, singer and folklorist Marat

Harutyunyan, and musicologist and composer Elinar Shahen, who provided several samples of her folkloric work. The collection features collaborative works by composer Artem Khachatur and poet Aleksandr Manasyan, performed in the authentic Artsakh dialect. It also includes the immensely popular song **"Derunts Dzorum"** (In the Derunts Gorge) by Ashugh Bagrat. Additionally, we integrated materials from the **"Folklore"** volume of the Ethnography of Artsakh series (Yerevan, 2023). These were generously provided by Armen Sargsyan, a native of Artsakh, former rector of Stepanakert State University, and current researcher at the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

The selection strikes a balance between timeless classics and archival gems recorded here for the very first time.

Dedicated to preserving the rich heritage of the Artsakh dialect, our project focused on selecting and showcasing its unique musical traditions. As a result of our field research, we gathered 36 distinct pieces, including *ritual*, *labor*, *domestic*, and *wedding songs*, alongside *love melodies*, *lullabies*, *humorous songs*, and *lively dance tunes*.

Through a deep exploration of the rich and unique Artsakh dialect, its timeless heritage, and modern songs, we have woven the spirit of its majestic landscapes into our music — filtering every subtle nuance through our own emotional and creative perception.

Unfortunately, no authentic recordings of indigenous Artsakh circle dances have survived, with the sole exception of a piece preserved by Sargis Parsamyan. Having lived in Artsakh just a few years ago, Parsamyan dedicated himself to teaching traditional songs and dances, and a video of his performance can still be found online today.

Although the Art Institute's archives contain musical scores for Artsakh circle dances, it is difficult today to determine their exact choreography. Two notable examples in the collection are cataloged as "Yayli" and a "Women's Circle Dance."

Broadly speaking, however, it is solo and duet dances that define the core choreographic identity of Artsakh. We breathed new life into one of these archival melodies by incorporating it into the Song of the Ascension, first as a brief interlude, and later transforming it into a vibrant segment for the "zurna" dance tune.

Artsakh songs possess unique melodic modes and rhythms. The traditional 6/8 time signature remains dominant, while 4/4 compositions are a recent addition.

A standout piece in Elinar Shahen's collection - a melody sung by a grandmother from Shoushi—served as the basis for our "carpet songs."

Duet dances are largely based on duets, as there could be no dance without a song.

The section on work songs merits special recognition. It spans from the incomparable horovels, featuring two unique examples in this collection to songs that accompanied threshing, churning, hand-milling, spinning, carpet weaving, and bread baking. Collectively, these pieces offer a profound glimpse into the arduous lives and bitter hardships of the people.

There is a profound stereotype that even the most cheerful Armenian songs carry an underlying current of sadness. ("joy through tears" or "melancholic cheerfulness") This phenomenon is vividly evident in the humorous folk songs of Artsakh, making it exceptionally difficult to classify them into a single, conventional genre.

The musical dialect of Artsakh is as distinctive as its spoken tongue, standing in sharp, unmistakable contrast to the musical traditions of other regions. To truly perceive and understand its unique essence, one must approach it with both knowledge and deep affection.

The songs are arranged according to genre, type, and context of use.

The first 13 are grouped as wedding songs. Songs 14 through 23

are songs of labor, reflecting the bitter and arduous lives of the people of Artsakh. Songs 24 and 25 are lullabies. 26 is a series consisting of 2 children's plays. The first part ("Papal Papal es Dghan") is from the collection of the Art Institute, the 22 was recorded by Elinar Shahen in Shoushi, from an elderly woman from Shoushi.

The famous **"Nakhshun Baji"** and "14" are presented together, as the program was originally composed for a concert performance as a musical performance.

We also adopted the melody for the first, tranquil section of the "Carpet Song" from that same grandmother from Shoushi, replacing the obscure original verses with folk verses related to carpet weaving and spinning found in the book "Artsakh Folklore".

The love song known as "Gyul-Gyuli" in an arrangement by Romanos Melikyan was included in the collection provided by Marianna Tigranyan with a poetic text in standard Armenian; however, which we allowed ourselves to replace with dialectal expressions, as our primary objective was to present as many songs as possible in the Artsakh dialect.

We have not included the carpet weaver's lullaby beginning with the line **"Karabakhn arev yrvana"** among either the lullabies or the work songs; instead, we placed it after the piece beginning with **"Karabakhy sarot a"**, considering them to be similar in type and significance.

We have included Ashugh Apa's song as an epigraph—featuring only the poetic text, as the song is not in dialect.

The songs are presented through monophonic, solo, and group performances, using natural voices (including children's voices) and light accompaniment by one or more instruments.

Lusine Nazaryan

Artistic Director of Nubar Folk Ensemble

Նարեկացի արվեստի միություն

Ֆո կապը մշակույթի հետ

«Նարեկացի» արվեստի միությունը (ՆԱՄ) բարեգործական հիմունքներով գործող և շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է: Կրելով սուրբ Գրիգոր Նարեկացու անունը և առաջնորդվելով հոգևորի խորհրդով՝ միությունը կոչված է ծառայելու հայ արվեստին, մշակույթին և հոգևոր արժեքներին:

«Նարեկացի» արվեստի միությունը հիմնադրվել է 2000 թ. ԱՄՆ-ում *Նարեկ Յարութիւնեանի* կողմից, իր ավագ եղբոր՝ *Սարո Յարութիւնեանի, Հարկո Ինսենթիվզ* ընկերության և իրենց լուսահոգի հոր՝ *Կարապետ Յարութիւնեանի* հիմնական աջակցությամբ:

2004 թ. միությունն իր դռներն է բացել Երևանում:

Իր գործունեության ընթացքում ՆԱՄ-ը կազմակերպել և կյանքի է կոչել մի քանի տասնյակ հատուկ նախագծեր, ամեն տարի իրականացնելով 300-ից ավելի համերգներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, վարպետության դասեր, ֆիլմերի ցուցադրություններ և այլն: Միության ջանքերով լույս են ընծայվել բազմաթիվ արժեքավոր հրատարակություններ: ՆԱՄ-ը համագործակցում է հայ և օտարերկրացի ստեղծագործողների, ինչպես նաև դեսպանատների հետ:

ՆԱՄ-ի հատուկ ուշադրության կենտրոնում են հաշմանդամություն ունեցող մարդիկ, տաղանդավոր երեխաները, մարզերի երիտասարդ արվեստագետները:

«Նարեկացի» արվեստի միության Երևանի կենտրոնում

գործում են *«Նարեկացի» ժողովրդական նվագարանների նվագախումբը, «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը, «Ռոտոնդա» ներառական թատերախումբը, «Քնար» երգչախումբը և միության նկարչության դասարանը*:

2006 թ. «Նարեկացի» արվեստի միությունը հիմնում է իր մասնաճյուղը **Շուշիում**:

Շուշիի կրթօջախ-կենտրոնում անվճար իրականացվում էին տարբեր ուսուցողական ծրագրեր՝ *կիթառի (հեղինակային երգ), գեղանկարչության, փայտափորագրության, մանրանկարչության, ասեղնագործության, լուսանկարչության, կարպետագործության, կավագործության, թատերական, պարի, ասմունքի, երգի, անգլերենի, արտթերապիայի* մշտական դասընթացներ, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումներ:

Ցավոք, 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո կորցրեցինք Շուշին, այնուհետև նաև Արցախը:

ՆԱՄ-ում բոլոր միջոցառումները կազմակերպվում են անվճար հիմունքներով և բոլոր միջոցառումների մուտքը միշտ ազատ է:



«Նարեկացի» արվեստի միության Շուշիի մասնաճյուղ
Naregatsi Art Institute Shoushi branch



Naregatsi Art Institute

Your Culture Connection

The Naregatsi Art Institute (NAI) is a non-profit organization that was established and currently operates on purely charitable bases. Named after **Saint Gregory of Narek**, the NAI's principal mission is to preserve and promote Armenian art, culture and spiritual values.

Naregatsi Art Institute was founded in the USA in the year 2000 by *Nareg Hartounian* and by the generous contributions of *Saro Hartounian*, their late father *Garabed Haroutunian* and *Harco Incentives* Inc.

The Institute opened its doors in Yerevan in **2004**.

Since its inception, the NAI each year has presented more than 300 concerts, exhibitions, lectures, master classes and film screenings collaborating with a great number of artists from Armenia and abroad and with some embassies as well. As part of its contribution to Armenian culture, NAI has created numerous unique books, CD's and publications exploring various facets of the rich Armenian cultural heritage.

The NAI provides a special place for children, emerging artists, artists with disabilities and artists living in the regions of Armenia outside of Yerevan.

The NAI is home to the *Naregatsi Orchestra*, the *Nova Folk Instruments Ensemble*, the *Rotonda Inclusive Theater Group*, the *Knar Choir* and the *Painting Class*.

In **2006**, the Naregatsi Art Institute founded its branch in **Shoushi**.

The Art Center in Shoushi provided a variety of free classes in *music (including piano, bard songs class, choir)*, as well as instructions in *painting, wood engraving, miniature painting, embroidery, photography, carpet making, pottery, theater, puppet theater, dance, recitation, English language, art therapy, computer graphics and design*. Naregatsi Shoushi also provided its own unique series of presentations and cultural events.

Unfortunately, after the 44-day war of 2020 we lost Shoushi, and then Artsakh too.

Admission to all events is free.

«Բռնենք ճամփան Արցախի» նախագիծը իրականություն դարձավ Հայկական բարեգործական ընդհանուր միության **(ՀԲԸՄ)** աջակցության շնորհիվ, ինչի համար հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

“Taking the Path to Artsakh” Project was realized through the support of the Armenian General Benevolent Union **(AGBU)**, to whom we extend our sincere gratitude.



Դադիվանք, 9-13 դդ.
Dadivank Monastery, 9th-13th cc.

«Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբ

«Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբը հիմնադրվել է **2006** թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոնի կազմում: Խմբի գեղարվեստական ղեկավարն է էթնոերաժշտագետ, ազգային երգերի կատարող *Լուսինե Նազարյանը*:

Խմբի երկացանկում տեղ են գտել Հայաստան աշխարհի գրեթե բոլոր ազգագավառների ավանդական մշակույթի նմուշները: Դրանց հիման վրա պատրաստվել են թեմատիկ համերգներ և ֆիլմեր: Կարնո տարածաշրջանի երգեցիկ նմուշների հիման վրա նկարահանվել է *«Կարմրավանքի երգ-պատմությունները»* ֆիլմ-համերգը, որում տեղ գտած նմուշների գերակշիռ մասը խմբի բանահավաքչական աշխատանքների արդյունքում հայտնաբերված նմուշներ են, որ առաջին անգամ հնչել են «Նուբարի» կատարմամբ: Համշենի երգերը և պարերը առաջին անգամ ներկայացվել է ամբողջական համերգային ծրագրով, որին հաջորդեց Դերսիմի տարածքի ավանդական մշակույթի նմուշներից կազմված համերգային ծրագիրը, որտեղ բազմաթիվ նմուշներ հնչում էին առաջին անգամ:

«Նարեկացի» արվեստի միությունը 2022 թ. հրատարակել է «Նուբար» հայ ավանդական երգի-պարի խմբի՝ ***«Մի բուռ երգ Մնձուրի լեռներից»*** ձայնասկավառակ-ալբոմը:

Խումբն իր գործունեության տարիներին ունեցել է բազմաթիվ համերգներ ոչ միայն *Երևանում*, այլև *Հայաստանի բոլոր մարզերում*, այդ թվում ամենահեռավոր գյուղերում, մասնակ-

ցել միջազգային փառատոների *Բուլղարիայում, Իտալիայում, Էստոնիայում, «Հայաստանը խաղաղության խաչմերուկում»* միջազգային փառատոնին, *Պոլիտեխնիկի ազգագրական երգ ու պարի ամենամյա փառատոնին, «Գութան» Հայաստանի ազգագրական երգ ու պարի ամենամա փառատոնին*: Ունեցել է բազմաթիվ ռադիո և հեռուստաելույթներ, խմբի ձայնագրությունները հնչում են նաև Եվրոպական հեռարձակողների միության հանրային ռադիոկայաններով:

ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Գործիքային կազմ

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – բլուլ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – դուդուկ, զուռնա
ՏԱՐՈՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ – դուդուկ, զուռնա
ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ – դհոլ
ՄԻՔԱՅԵԼ ԳՅՈՒԼԻՔԵԽՎԱԵՎ – դափ
ՆՈՒԲԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – քանոն
ՄԱՐԻԱՄ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ – սազ

ԵՐԳԻՉՆԵՐ

ԼՈՒՍԻՆԵ ՆԱՋԱՐՅԱՆ
ԱՐՈՒՍՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՆԱՐԵԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՎԵՐՈՆԻԿԱ ՊԱԼՅԱՆ
ՍՈՆԱ ԵԳԱՆՅԱՆ



Nubar Folk Ensemble

The Nubar Folk Ensemble was founded in **2006** as part of the Children's and Youth Center for Artistic Education and Culture of the Ministry of Education and Science of the Republic of Armenia. The Ensemble's artistic director is *Lusine Nazaryan*, an ethnomusicologist and performer of traditional songs.

The Ensemble's repertoire encompasses samples of traditional culture from virtually all ethnographic regions of Armenia. Thematic concerts and films have been produced based on this material. The film-concert *"Song-Stories of Karmravank"* was filmed based on the song samples of the Karno region, in which the majority of the samples included were discovered as a result of the group's folk collection work and were first performed by the Nubar.

Hamshen songs and dances were presented for the first time in a complete concert program, followed by a program featuring examples of the traditional culture of the Dersim region, with many pieces being performed for the first time.

In 2022 **Naregatsi Art Institute** released the Nubar Folk Ensemble's CD-album ***"A Handful of Songs from the Mndzur Mountains"***.

Throughout its years of activity, the group has performed numerous concerts not only in Yerevan but also across all regions of Armenia, including the most remote villages, and has participated in international festivals in *Bulgaria*, *Italy*, and *Estonia*, as well as *"Armenia at the Crossroads of Peace"* International Festival, the *Polytechnic's Annual Festival of Folk Song and Dance*, and the *"Gutan" Armenian Folk Song and Dance Festival*.

The group has performed repeatedly on radio and television, and its recordings are also broadcast on public radio stations of the European Broadcasting Union.

PERFORMERS

Instrumental Group

ANNA HOVHANNISYAN – blul
ARSHALUYS TADEVOSYAN – duduk, zurna
TARON BAGHDASARYAN – duduk, zurna
NAREK KARAPETYAN – dhol
MIKAEL GYULIKEKHVAEV – daph
NUBAR HARUTYUNYAN – qanun
MARIAM MNATSAKANYAN – saz

SINGERS

LUSINE NAZARYAN
ARUSYAK HARUTYUNYAN
VAHAGN KHACHATRYAN
NAREK TUMANYAN
ANNA HOVHANNISYAN
ANI ABRAHAMYAN
VERONIKA PALYAN
SONA YEGANYAN



Շուշի, Արցախ
Shoushi, Artsakh


2
ԿՈՇԿԱԿԱՐ
ՎԱՂՉՈ


1.

Կյիրմիրի տըվավ հալավը,
Սերտս ընգյավ ալավը արա հո...
Էն հիփ յարս տոն կիկյա,
Լոք տամ նընգնիմ կոլյավը արա հո...

Անկին յարս քալին ա,
Հըրթնաշորս ծալին ա, արա հո...
Հու գյուդում չի թող գյիդա,
Հըրսանեքս կալին ա, արա հո...

Հարը իրան տեղն օնե,
Մարը իրան տեղն օնե, արա հո...
Քիր ու ախպեր սաղ կենան,
Յարն էլ իրան տեղն օնե, արա հո...

Այ ժողովուրդ շեն կենաք,
Սերտներնիդ միշտ լեն կենաք, արա հո...
Յարս եկալ ա կոշտս,
Հինչ կինի վըեր տեն կենաք, արա հո...



2.

Ախճի տու վեր բաղան ըս,
Կյարմյուր վարդին թաղան ըս,
Ամեն կինի խմելիս՝
տու ինձ մըհար մազա իս:
Կաքավն ա կաղնալ քարին,
Էն ղաշանգ կանանչ սարին,
Մի դաստա վարդ ըմ քաղալ,
Տարեք իմ թազա յարին:

Պիծա ախճիգյ համ օնիս,
Չըրքըպյուլյոր ծամ օնիս,
Խունջիկ մունջիկ մի անի,
Տու ինձ կյալի կամ օնիս:
Նախշուն գյուլբան կեցալ ըս,
Աշկտ լյացավ լըցալ ըս,
Յարդ հեն ա ղարիբ տըղ,
Վարդի նման պեցվալ ըս:

Սիրալ ըմ քեզ ատալ ըս,
Ճընապարս պատալ ըս,
Թողում չըս ծոցտ մտնիմ,
Կռներս կուտրատալ ըս:
Ես քինըմ ըմ լյաց չինիս,
Ըրտասունքավ թաց չինիս,
Մըռնիմ կամար ունքերիդ,
Հանց քոն իլ վեր պեց չինիս:

Հեյ հեյ հեյ հայ ախճիգ
Կյարմյուր սոլերով ախճիգ
Հեյ հեյ հեյ հեյ ջան ախճիգ
Ղարաբաղցի լյավ ախճիգ:



3.

Դռ դոփ դոփ հըրսանեք
Պապունց տանը կնանեք,
Հըվաքվալ ըն, վեր ծափ տան,
Ուրանց թափ տան, մին պար կյան,
Սըրտըները վեր ասին,
Ըստուր ընդուր բամբասին:
Հարսին ասին քաչալ ա,
Դերը վըզան պաչալ ա,
Բելին բըլա դիլանչի,
Խաչախպերը թալանչի:

Հարսին հարը լալեգյ ա,
Մարը ցավ ու ալեգյ ա,
Տալը քոռ ա, քուրը՝ քառ,
Այ քեզ ղավալ ու մակար:

Հարթևեն լյուզյուն կրակ ա,
Բայց մի հոր տան ճիրագ ա,
Ախպըերըն էլ խաշփուշ ա,
Դե հինչ անինք, շատ ուշ ա...



4.

Ծաղկալ ա մեր ծյորեն խնծյորին, ջա՛ն,
Ձուգվալ ա հունց վեր խաս, թըզա հարս ջան,
Մեր ծյորեն, մեր ծյորեն խնծյորին, ջա՛ն:

Էն աղջիկն հոր քինաց, հու՞ր քինաց, ջա՛ն
Իմ սերտը հո՞ր տարավ, հո՞ւր տարավ, ջա՛ն
Անսերտը հո՞ր քինաց, հո՞ւր քինաց, ջա՛ն,
Ձուր քինաց մեր ծյորեն խնծյորին, ջա՛ն:



5.

Էս հի՞նչ օր ա, հի՞նչ քիսյօր ա, Հեղինա,
Կյապուտ երգինք կյապուտ ծյոր ա, Հեղինա,
Հոտաղատըղ, սիսեռն աղբուր,
Օշը դբի ծյորը վեր ա, Հեղինա:

Էս հինչ օր հինչ քիսյօր ա, Հեղինա,
Մանիշյակավ հարփած ծյոր ա, Հեղինա,
Հավք ու ծաղեկ մեզ են ասում,
Խոսքը տալի օր ըսօր ա, Հեղինա:





6.

Ղարաբաղա խանըմ խաթըմ Այան ըմ, Այան ըմ,
Սրտես սըփխա ծեքես խախալ, Այան ըմ, Այան ըմ,
Շատ չըն կենա տոնս տեղս, Այան ըմ, Այան ըմ,
Վարքար կենա ազգս, ցեղս, Այան ըմ, Այան ըմ:

Խախալ անիմ, ճեղաց տանիմ, Այան ըմ,Այան ըմ,
Դանս աղիմ, ալեր մաղիմ, Այան ըմ,Այան ըմ,
Առանց այան տոնը վայ ա, Այան ըմ,Այան ըմ,
Թող միշտ ինիմ, տոն տեղ տինիմ, Այան ըմ, Այան ըմ:



7.

Այան մատաղ լաչին բոյիդ,
Ղըլամավ քաշած սերուն սոյիդ,
Էս հինչ ոյաշյանգ ղուշ ըս քըթալ,
Հինչ լյավ թայ ու թուշ ըս քըթալ:
Ղուշ ըս քըթալ, նուշ ըս ըս քըթալ,
Հինչ լյավ թայ ու թուշ ըս քըթալ:
Հանց ա լըհա մարալ ինի,
Բըլես ճըրին ծարավ ինի,
Թող կաց էրկու բըլես մաչին
Սերը հազար տարավ ինի:
Ծարավ ինի, ծարավ ինի,
Սերը հազար տարավ ինի:

Հորավ ինիք, մորավ ինիք,
Հանդավ, սարավ, ծորավ ինիք,
Վեր ծեր հացը թուռնան կենա,
Թըխտըմոր, խըմորավ ինիք:
Հորավ ինիք, մորավ ինիք
Հանդավ, սարավ, ծորավ ինիք:
Էրկու կըլյոխ մին պերց ինիք,
Ուրուր դըլվե միշտ քերծ ինիք,
Վախտավ չինիք, բախտավ ինիք,
Թաքավերու թախտավ ինիք:
Վախտավ չինիք, բախտավ ինիք,
Թաքավերու թախտավ ինիք:

Բաղչատ ծաղկու լալա ինի,
թալան լիգյը, լալա ինի,
Տարեն մինչև հյուլյորվե կյա,
Խըտտետ մին ղոչ բալա ինի:
Լալա ինի, լալա ինի,
Տոնդ լիգյը բալա ինի:

Այան մատաղ ծըեր ճանեն,
Ծեր տարեն ա, ծեր տարեն,
Հոր ա հավասն այանեն,
Ախր Այան հունց պար կյա:
Դե յեր կըցեք, պար եկեք,
Իմ ըշկես յուս իմ բըլեք,
Այան մատաղ ծեր ճանեն,
Այան թիմաշա կանե:

Այան մատաղ ծըեր ճանեն
Ծեր տարեն ա ծեր տարեն...


Ա - յան մա - տաղ լա-չին բո - յիդ, Ղը - լա - մավ
քա - շած սե - րուն ու - յիդ, Էս հինչ պա - շանգ դուշ ըս քը-թալ,
Հինչ յավ թայ ու թուշ ըս քը - թալ: Ղուշ ըս քը - թալ,
նուշ ըս քը - թալ, Հինչ յավ թայ ու թուշ ըս քը - թալ:
Ա - յան մա - տաղ ծըեր ճա-նեն, Ծեր տա - րեն ա, ծեր տա - րեն,
Հոր ա հա - վան ա - յա-նեն, Ա - խըր Ա - յան հուճց պար կյա:
Դե յեր կը - ցեք, պար ե - կեք, Իմ ըշ - կես յուս իմ քը - լեք,
Ա - յան մա - տաղ ծեր ճա-նեն, Ա - յան թի - մա - շա կա - նե:

8.

Հեյ հեյ հեյ Հուռում,
Ղըլետ փեշկը պեց ըրա,
Էսա կյամա Խաչանը,
Ծափ տո, պար եք, քեփ ըրա:

Ջան ջան այ Խաչան,
Վեր սուրբան աս, վեր խաչան,
Էս սհաթես ես փռիմ
Վըններետ տակեն խալիչան:

Տըր հա, տըր հա տըմբլա,
Խաչանեն քեփը պեցուրա:

Համ լյավ կինի, լյավ փլավ,
Բոլ կերալըմ, լյավ խմալ,
Ջուբս լիգը շըբաշավ,
Տոնըմ պերալ քեզ միար:

Չէ չէ այ Խաչան,
Հըրսանեքտ մահնայա,
Թազա հարթնանն ըս պաչալ,
Էտ շաբաշտ շահնայա:

Տըր հա, տըր հա տըմբլա,
Հուռումեն օրը սև մընա:

Կարքեն պահէ քեզ Հուռում,
Հինչ ըս յըրաս կռկռում,
Վեր Խաչանը կզնվից,
Համ կրակ ա, համ զուլում:
Բուստանըմը թանագյ ա,

Դըրբըզըմը փալանգյ ա,
Կըզնվըմել այ Խաչան,
Հինչ ասըմ ըմ հանագյ ա:


Տըր հա, տըր հա տըմբլա,
Խաչանեն քեփը պեցուրա:

Մատաղ ինիմ հինագիտ,
Էտ քու տնգած թինաքիտ,
Հինչ ըս մըհակավ անըմ,
Տըռանը կապած փիլյանգին:
Սերը սրտետ լեն կենա,

Հըրսնքներըմը քեփ ըրա,
Իմը տուվըս այ Խաչան,
Վընն ըմ իլալ քու պաչան:

Սերավ ինինք լավ ինինք,
Կտոց-կտոց հավ ինինք,
Հիշքան ապրինք ըշխարքըմ,
Միշտ սերավ ու լյավ ինինք:

Տըր հա, տըր հա տըմբլա,
Խաչանեն քեփը պեցուրա:



9.

Նախշուն աքիր, նախշուն աքիր...

Պաքվա պասիլկան կերալ ում, Ծատուր ջան,
Ցորտ ճուրը յերան խմալ ում, Ծատուր ջան,
Եկ, եկ, Ծատուր ջան, եկ, քե մատաղ, մատուր ջան,
Աշկերեդ, ունքերեդ, ղալամեդ մատաղ,
Ծատուր ջան, Մատուր ջան:

Քյոխվան տոռնը թակում ա, Ծատուր ջան,
Եկած խարջը օգյում ա, Ծատուր ջան:
Եկ, եկ Ծատուր ջան, եկ, քե մատաղ, մատուր ջան,
Աշկերեդ, ունքերեդ, ղալամեդ մատաղ,
Ծատուր ջան, Մատուր ջան:



10.

Ինձ ասում ըն նախշուն բաջի,
Ղարաբաղա նախշուն բաջի:
Ես քինացի տըվարածի,
Տավարս կորավ ես մնացի...

Ինձ ասում ըն յեր կաց պար եկ,
Ջանեդ մատաղ, եր կաց պար եկ...
Ախր պա կյալը գյուդում չըմ...

Վնաս չոնե կսըվերիմ,
Համոթ պեն չի կսըվերիմ
Տմբլան թակի, զուռնան փչի,
թառը ածի,
Եր ըմ կենըմ պար ըմ կյամ
Ու՛... վարսս կտրիմ, ախր պար
կյալը գյուդում չըմ...



11.

Ես պար կկյամ 14

Ուզունդարան օզյում չում,
Շուշանիկին սիրում չում,
Թարաքյամա կարում չում,
Նունուփարին գյուդում չում:
Իմ հավաս ա տըսնըչորս,
Ես պար կըկյամ տըսնըչորս,
Օրիշ հավա ես գյուդում չըմ,
Իմ հավաս ա տասնըչորս:

Բուստանեն բարան պենալ չըմ,
Կանանչ դայրա կենալ չըմ,
Հու ինձ անսեր հարս տանե,
Մին օր ծերքեն կենալ չըմ:

Ա մին եկեք տեսնանք՝
Էն հո՞ւվ ա կյամ՝ գյոխը պեց:
- Մին տըս, էն Հայկանուշին թոռնն ա՞...
- Գյուդում չում:
- Ադա, բալքյա Վարդանուշին թոռնն ա:
- Ճընանչում չըմ:
Իխշանեն կնեգ Զյումրութն ա՛...
- չէ
- Ը՛...
- Ջա՛ն...
- Հա՛՛... տյու մի ասի,
Մեր Սաթոյի ըղջըկա թոռան,
Նրա հեռու բարեկամի,
Քեռու կընգյա հարևանի,
Նրա քրոջ տեքոր տըղի

Քըղաքան եկած թոռնըն ա:
Ի՛նչ...
Հեչ...
Մին, էրկուս, իրեք, չորս,
Ես պար կըկյամ տասնչորս:
Իմ հավաս ա տասնչորս,
Ես պար կըկյամ տասնչորս:
Օրիշ հավա ես գյուդում չըմ
Իմ հավան ա տասնըչորս



12.

Ժըղովուրդ պարավ եք եկալ,
Հազար պարավ ըք եկալ,
Սօր մեր տոնը հըրսանեք,
Մեծ ըրխոթուն մեծ քեփ ա:
Մաջնակ տղաս թոփչակս,
Ծաղեկ հարթն ա տոն պերալ,
Լոխ էլ պարավ ըք եկալ,
Հազար պարավ ըք եկալ:

Լոխ գյուդում ըք, վըեր պուղին
Թուշին խոսք ասող մարդ ա,
Մին Պուղի, մին Ղարաբաղ,
Եկեք տինինք թամադա,
Հանցու ուրան խոսքավը
Սօր մեր սեղանը ծաղկե:
Խմինք ուրան կենացը
Հանցու մեր աղ ու հացը,
Հանցու արդար մեր կինին
Ըսօր մեզ հալալ ինի:
Թամադա ջան, կենացդ:

Ժո - ղո - վուրդ, պա - րավ եք ե - կել, Հա - զար պա - րավ ըք ե - կել,

5

Սօր մեր տո - նը հըր - ա - շեք, Մեծ ըր - խո - թուն, մեծ քեփ ա:

9

Մաչ - եակ տը - ղաս թոփ - չա - կըս, Ծա - ղեկ հարթեն ա տոն պե - րայ,
Ըս - տաց մին - չև է - բե - վան Պա - բե - կամ ու հը - բե - վան

13

Լոխ էլ պա - րավ ըք ե - կել, Հա - զար պա - րավ ըք ե - կել:

17

Լոխ գյու - ղում ըք, վըեր Պու - ղին Թու - շին խոսք ա - սող մարդ ա, Մին Պու - ղի, մին
Խը - մինք ու - րան

22

Ղա - բա - քաղ, Ե - կեք տի - նինք թա - մա - դա, Հան - ցու ու - րան խոս - քա - վը
կե - նա - ցը Հան - ցու մեր աղ ու հա - ցը, Հան - ցու ար - դար մեր կի - նին

27

Սօր մեր սե - ղա - նը ծաղ - կե: Թա - մա - դա ջան, կե - նա - ցըդ:
Ը - սօր մեզ հա - լալ ի - նի:

13.

Տարան հայ, տարան հայ,
Հարթնը տարեն, հըրթնամար,
Աշկտ լյուս իլ, հըրթնամար:
Պիրեն հայ, պիրեն հայ,
Հարթնը պիրեն, փըսամար,
Աշկտ տյուս կյա, փըսամար...


Հայ փըսամար, մին տյուս եկ,
Տեզ քեզ հինչեր ընք պերալ:
Աշկտ հանող ընք պերալ,
Շիրեփդ խլող ընք պերալ,
Տղատ տանող ընք պերալ,
Կլխեդ բոմփող ընք պերալ,
Տոնդ ավլող ընք պերալ,
Ալիր մաղող ընք պերալ,
Խմոր հուտցող ընք պերալ,
Մածուն մերող ընք պերալ,
Պերալ ընք հայ պերալ ընք,
Քու աշկեդ լյուս ընք պերալ...



14.

Մարտակերտի հորովել

Ըստըղնըյեր հանդեր ա, արա հո՛,
Լոխ ըրծաթե բանդեր ա, արա հո՛...
Տենակ տըվեք, սերտ ճըղիմ, հեյ, հե՛յ.
Լոխ բողում, բողում դարդերան, արա հո՛...



15.

Հոլել, հոլել, եզո, հո հո...

Ել, էլ չեմ կարանում, հո, հո...
Տունըն հիփ էլ կյաս, հալալ ա, հո, հո...
Ասել թող չեմ, Լաչին ջան, հո, հո...
Մեջքիդ մատաղ, ջան, հարալո, հո, հո, հո, հո...
Հո եզո, հո մարալ...
Վայ, լայ, կյալիս ա, հո, հո...
Վախ, աման, Հեպոն լալիս ա, հո, հո, հո, հո...
Հո, աման, ել, յաման, տո ել...





16.


Կալին երգը

Կալին խոտը հարալ ըմ,
Կամնը թազա քարալ ըմ,
Հանդեն միկա խորթն ա իլալ,
Սօր շիլակավ տարալ ըմ:
Եկ դըրբըզեն նալ քըցինքյ,
Կալին տեղը կալ քըցինքյ:

Կալը խուխես թախտն ա,
Նալը՝ խուխես թախտն ա,
Տե մի եր կաց, այ կընեգյ,
Եր, հըշընեն վախտն ա:
Հաշան անինքյ, կալ քըցինքյ,
Տոնը միկա դան քըցինքյ:

Քամեն հընցավ՝ շոռ տո կյա,
Հոռը կըտրից, հոռ թո կյա,
Կործս վախտին թա պըրծնիմ,
Կյապուտ երգինքյ, թոռ թո կյա:
Կալիս ճուր ա հարկավեր,
Դըլվես հնգեր ու քավեր:

Դանին կեսը քյուխենն ա,
Կեսը խարջին-ծուխենն ա,
Տակին թա վեր պեն մընա,
Մեր փայն էս ա ըս տարե,
Վերջը պարին կըտարե:



17.

Մանե, մանե, իմ ճըխարակ,
Տու անկին քար, իմ ճխարակ,
Անտարեն տար, իմ ճխարակ,
Անհարեն հար, իմ ճխարակ,
Աստղերը տյուս ա եկալ,
Ըշկերես յուս ա եկալ,
Ճըխարակս պեն ա նստալ,
Ումուդա ջան ա նստալ:

Ծենավ աշըղ, իմ ճխարակ,
Ղարդերս ասող, իմ ճխարակ
Ծեն տո ծենիս, իմ ճխարակ,
Ցավս տանող, իմ ճխարակ:
Աստղերը տյուս ա եկալ,
Ըշկերես յուս ա եկալ,
Ճըխարակս պեն ա նստալ,
Ումուդա ջան ա նստալ:

Ազատ

Մա - նե մա - նե իմ ճը - խա - րակ,

3 3 3

տու ան - կին քար իմ ճը - խա - րակ, ան - տա - րեն տար

6 3 3

իմ ճը - խա - րակ, ան - հա - րեն հար իմ ճը - խա - րակ:

9 3

Աստ - ղե - րը յուս ա ե - կալ, ըշ - կե - րես

12 3

յուս ա ե - կալ, ճը - խա - րա - կըս պեն ա նըս - տալ,

15 3 3


ու - մու - դա ջան ա նըս - տալ:

18.

Մանած թիլս հաստ եկավ,
Վար ու ցանքս նեստ եկավ,
Կարճ ծեքես պերակ մեջքես
Հինչ զուլում ար ռաստ եկավ,
Սև քաշերը տոն ընգյին,
Լեշ տեսին, եարա պրծին,
Ա՛խ, եարա պրծին...

Բաղչան խոտը կոխալ ա,
Ուրաղավ հարող չըկա,
Ես հինչ զուլում յերգիր ա,
Մըզետե մտածող չկա,
Բանդս բարաս շեն պահիմ,
Չոր տափեն կրակ անիմ,
Ա՛խ, կրակ անիմ...

Քյոխան եզը բագն էծը
Խարջի, պարտքի տեղ տարին,
Տոնը պրիշակ, տար չկա,
Անտար խոխա, հար չկա,
Եզն ու կյութան վեր չկան,
Տերտակ փորին ճար չկա,
Ա՛խ, վա՛խ, ճար չկա...


Մա-նած թի-լըս հաստ ե-կավ, վար ու ցան-քըս նեստ ե-կավ,
5
կարճ ծե-քես պե-րակ մեջ-քես հինչ գու-լում ար ռաստ ե-կավ,
9
սև քա-շե-րը տոն ըն-գին, լեշ տե-սին, եա-րա պըր-ծին,
13
ա՛խ, եա-րա պըր-ծին... ա՛խ, եա-րա պըր-ծին...

19.

Գորգ-Կարպետ

Տակիդ գյաբան յան պիտեր,
Չար աշկը խափան պիտեր,
Սիրածըս էս ա ծոցըմըս,
Քըշերը էրգյան պիտեր:
Խալիչեքը փռալ ըմ,
Նախշուն պըերցեր տիրալ ըմ,
Յարըս ղոնաղ ա կյալու,
Լյավ-լյավ պեներ հըզրըլյալ ըմ:

Գյուլբյա կըցիմ ճաղեր ա,
Բաղը բախճա բաղեր ա,
Սիրածըս կըռեվ քինից,
Ըրտասունքս շաղեր ա:
Տես մեր Քիրսը ծյունյալ ա,
Մարըս խալին հինալ ա,
Քու էդ փիս խասյաթատ, յար,
Սըերտս, թոքս էրալ ա:

Գյաբա-կարպետ ղաշանգ նախշիմ,
Օթախ-օթախ տանիմ փարշիմ,
Իմ կյըլոխս քու ծեռքիտ ա,
Վըեչ կտրըմ ես, վըեչ բախշում:

Կույն-կույն թիլերը քաշալ ըմ,
Մաննը-ըղենգյը մաշալ ըմ,
Խալուս յըրան, իմ անկին յար,
Չինար բոյտ, տես, նախշալ ըմ:

Այ հավան ըմ, այ հավան ըմ,
Մեր մըեծ կըրպետին խավան ըմ,
Ադա կոզե հարուրը խոսե,
Էնա քըեզ սրտանց հավան ըմ:



20.

Մատաղ ինի ծըեզ աքան,
Եկեք քյոմագ ըրեցեք,
Չաթուն կախ տանք ուճուրքան,
Կյործի քյըցինք խընեցեն:
Խընեցե, հըրեցե, եղը պարտքս տըվեցե,
Թանավ տոնս պըհեցե:

Կյարունք ին,ի թոռը կյա,
Կովըս յոնջա ըրածե,
Կյործը լիգյը տոնը կյա,
Թացան պիրի չուր հացեն:
Խընեցե.....

Մըեր ապրուստը մին կով ա,
Էն էլ եկեն կյուղացեն,
Ըրտասունքը մին ծով ա,
Պա հունց ապրե գյուղացեն:
Խընեցե...

Ազատ

Մա-տաղ ի-ևի ծղեզ ա - քան, ե-կեք քյո-մագ ը-րե-ցեք,

6

Մա - տաղ ի-ևի ծղեզ ա - քան, ե-կեք քյո-մագ ը-րե-ցեք, չա-թուև կախ

12

3

1. 2.

տանք ու-ճուր-քան, կոր-ծի քյը-ցինք խը-նե-ցեն: խը-նե - ցեն:

16

Խը - նե - ցե, հը - րե - ցե, ե - ղը պարտ - քըս

19


տը - վե - ցե, թա-նավ տո - նըս պը - հե - ցե:

21.

Պուժկես տակեն վերջին փուշին,
Եկավ տարավ դերունց նուշին,
Էն մին հըփուռ կորեկըն էլ
Բալաս տըվավ ծըտեն ղուշին:
Աղե արկանք մաղե արկանք
Քեզանըմ կա էլլա հարկանք:

Կուրկուտ ըրա, վեր ճաշ անինք,
Փուշի ըրա, լավաշ անինք,
Ասե մինչև ե՞փ բիդի մունք
Դարդի ծերքան ախ վաշ անինք,
Աղե արկանք մաղե արկանք
Քեզանըմ կա էլլա հարկանք:

Ըստի հալբաթ էլ կենալ չենք,
Շատ չընք մնա դոնգի սաման,
Հալբաթ մին օր մեզ մըհար էլ
Մին տեղա լուս կըլուսանա,
Աղե արկանք մաղե արկանք
Քեզանըմ կա էլլա հարկանք:



22.


Հացթուխեն երգը

Տարըս կորավ սով տարեն,
Տոնըս առանց կով տարեն,
Պա ես հունց չի լյաց ինիմ
Ըրտասունքը ծով տարեն,
Հուր հաց օնե, թըխել տա,
Տանե բոլ-բոլ խուխեն տա:

Թուրուն օնիմ, ճախ չոնիմ,
Ծըհան օնիմ, մաղ չոնիմ,
Հացը թա ինձ թըխել տաք,
Սովան ցավան վախ չոնիմ:

Հուր հաց օնե, թըխել տա,
Տանե բոլ-բոլ խուխեն տա,
Հուր հաց օնե, թըխել տա,
Ուրխութունավ խուխեն տա:

Մաշկըս ծածկիմ շալավը,
Իրեսես տամ ալավը,
Բալքի մին ծաքյ ա ծաքյում,
Կյալիս տըռնեն կյալավը:
Հուր հաց օնե, թըխել տա,
Տանե բոլ-բոլ խուխեն տա,
Հուր հաց օնե, թըխել տա,
Ուրխութունավ խուխեն տա:



23.

Բաղչան բըհար ում կապալ,
Սերտս սևավ ում կապալ,
Նշանածս տանը չի,
Իմ քունս էլ տանում չի:
Տղա, տղա, ջան տղա,
Ղայամդ ինձ տո, կիր կիրիմ,
Խելքդ հանդա տոն պիրիմ:

Թոխպը եկու մըռըխեց ,
ճեշ կրակեն ճըլխեց,
Տղա տղա ջան տղա,
Ղայամդ ինձ տո, կիր կիրիմ,
Խելքդ հանդա տոն պիրիմ:

Արևը տվավ սըրերեն,
Տեղեն շողքը ծըռներեն,
Ինքը քեցալ ա կյոռներեն,
Ինձ թողալ ա տըռներեն:
Տղա, տղա, ջան տղա,
Ղայամդ ինձ տո, կիր կիրիմ,
Խելքդ հանդա տոն պիրիմ:

Թոխպը եկու մըռըխեց ,
ճեշ կրակեն ճըլխեց,
Տղա տղա ջան տղա,
Ղայամդ ինձ տո, կիր կիրիմ,
Խելքդ հանդա տոն պիրիմ:
Քեզ հընդերան տոն պիրիմ:

Բաղ-չան բը-հար ում կա - պալ, Սեր-տըս սե - վավ ում կա -

8

պալ, Նը-շա - նա-ծըս տա-նը չի, Իմ քու - նըս էլ

15

տա-նում չի: Տը-դա, տը-դա, ջան տը - դա, Ղա - յա - մըդ

22

ինձ տո, կիր կի - րիմ, Խել - քըդ հան-դա տոն պի - րիմ:

29

Թոխ-պը ե-կու մը-ռը - խեց, ճեշ կը - բա - կեն ճըլ - խեց, Տը-դա տը-դա

34


ջան տը-դա, Ղա-յա-մըդ ինձ տո, կիր կի-րիմ, Խել - քըդ հան-դա տոն պի-րիմ:

24.

Քինամ դարդս հուր պատմիմ,
Քու հար քեցալ ա, կյամ չի,
Դե եկ, բալաս, նի կապեմ,
Նանի ասիմ, խաղ կանչիմ,
Լայ լայ լայ լայ, իմ բալա,
Բայ բայ ասիմ, իմ լալա:

Քյուխեն օրը սև տըռնա,
Քյու հոր զոռավ կոռ ղարկից,
Սաբավ օգից լյավ տըռնա,
Համա հետան չոռ ղարկից:

Մինը կա վեչ դարդ քաշի,
Հընգեր տըռնա իմ վային,
Նանի ըրա, բոյ քըշե,
Հըսեր քու մոր հըրային:




25.

Ա քիշ, ա քիշ, կըտըրվեք,
Թողեք ապան քոն ինի,
Յըեկեք լայ լայ լայ կանչինք,
Ապան պատառ քոն ինի:
Լայ, լայ, ապա ջան,
Բայ, բայ, ապա ջան...

Ա քիշ, ա քիշ, կըտըրվեք,
Թողեք ապան քոն ինի,
Բալքյամ հըրսանեք քինի,
Շաբաշ տըվող շատ ինի:
Լայ, լայ, ապա ջան,
Բայ, բայ, ապա ջան...

Ա քիշ, ա քիշ, սուս ըրեք,
Թողեք ապան քոն ինի,
Յըեկեք լայ լայ լայ անինք,
Ապան պատաղ տըրարվե:
Լայ, լայ, ապա ջան,
Բայ, բայ, ապա ջան...



26.

Պապալ պապալ էս տղան,
Մին փունջ կապալ էս տղան,
Դաստանի գյուլ էս տղան,
Սարի սմբուլ էս տղան,
Բաղի բլբուլ էս տղան:

Դընգ–դընգ, դընգ–դընգ, դընգոցն ա,
Մըեղրավ լիգյը քթոցն ա,
Թոխ օճչխարեն տմակն ա,
Մըթեն տըղին ճրագն ա,
Մըեր օճախին կրակն ա:

Դիլ դիլ դիլ դիլ դիլ դիլ դիլ,
Բաղիս բաղչիս կանաչ ծիլ,
Արկաթ գյարդան, մընջքը ճիլ,
Պընդ վընեն ու ծեռք, մըետքը ժիր,
Սազի ծենն ու երգը զիլ:

Ձափիկ ձափիկ ձիրանիկ,
Կարմուր վարդիկ նըմանի,
Ոսկե գանգուր մազերը
Վըր ուր գուզի կտանի:
Վըզ վըզ տափեր աղամնի
Վառ վառ տափեր նըմանի
Ձունուումը գերմակ թաթիկներ
Կուզես վեսկի մատանի:


Պա - պայ պա - պայ էս տը - դան, մին փունջ կա - պայ էս տը - դան,
դաա-տա-նի գյուլ էս տը-դան, սա-րի սմ-բուլ էս տը-դան, բա-ղի բլ-բուլ էս տը-դան:
Զա - փիկ ձա - փիկ ձի - բա - նի, կար-մուր վար-դիկ նը - մա - նի,
ու - կե գան-գուր մա - զե - րը վեր ուր գու - զի կ - տա - նի:

27.

Ջան գյուղում

Իմ ծաղիկս քաղած ա,
Պեցյուր սարին կյեղած ա,
Էս քըշեր ծաղկիս լյուս կյա,
Դյուշմանին աշկը տյուս կյա:
Սաջին կթխիմ յոխա,
Իմ յարիս չոխան թոխ ա,
Յարս մին քըերծ ա տըեռալ,
Ես հալա մին պիծի խոխա:

Խնձոր օնիմ կծած ա,
Չորս ղոլը ըրծաթած ա,
Ախպըերս օզից, տվի վըեչ,
Ասի յարիս բախշած ա:
Լյուսյունգյան յոլ ա յոլ ա,
Տու մին կոժ, ես մին կոլա,
Յար ջան, քըեզ հի՞նչ խոսկ ասիմ,
Չըրչարմանքըս ինձ բոլ ա:

Էրկու կյապուտը գյոլ ա,
Լյուսերը քըլըքոլ ա,
Օզեցի թա սեր փըռնիմ,
Մի ախճիկ ասից բոլ ա:
Յարիս աընմն Արշակ ա,
Ծըեռքը հըզըրփեշակ ա,
Հիբ վըեր կոշտըս ա կյալիս,
Մին դաստա մանիշակ ա:

Սեյրանի կա, սաղի կա,
Էքյուծ էլլօր կաղի կա,
Ա յար, տու հի՞նչ կգյիդաս,
Վըեր սըրտըմըս դաղի կա:
Թավան ծակ ա, եղ չիկա,
Փըսան եկավ, տըեղ չիկա,
Փըսեն շատ իրես չըն տալ,
Փըսեն եղածու չիկա:



28.

Դե հոյ նանայ

Նախշուն աղջիկ մազավ աղջիկ, դեհոյ նայ նայ...
Դու իմ սրտես սազավ աղջիկ, դեհոյ նայ նայ...
Արի քինանք մեր մեծ բաղը, դե հոյ նայ նայ...
Համ սեր անինք համ էլ խաղը, դե հոյ նայ .....

Տյուվալ գիդաս, թա տղա ես,
Կյոտե կապել դեռ չգիտես,
Տյուվալ գիդաս թա աղջիկ ես,
Ասեղ թիլիլ դեռ չգիտես:

Տյուվալ գիդաս, թա տղա ես,
Խոտ հարիլը դեռ չգիտես,
Տյուվալ գիդաս թա աղջիկ ես,
Մածուն մերալ դեռ չգիտես:

Տյուվալ գիդաս, թա տղա ես,
Փատ կտրիլը դեռ չգիտես,
Տյուվալ գիդաս թա աղջիկ ես,
Գյուլբա կյործել դեռ չգիտես:

Ես գյուդում ամ լավ աղջիկ ես,
Ես գյուդում ամ լավ տղա ես,
Մինակ հալա շատ պուճուր ես:
Համ պուճուր ես, համ էլ լավն ես,
Վար մըծանաս, մինա իմն ես:



29.

Մին օր քեցե տեսնամ Դերունց ծորումը

Մին ղյաշանգյ աղչիգ՝ կյանաչ–կյարմուր շորումը,
Կասիմ՝ ախչի, հուվըս, հինչու շոռ կիկյաս,
Դու իմ սազես երե դամեն տոր կիկյաս:
Կասիմ տղա ախչին քու հար, քու մար ա,
Ինձ ասում են Մանաս դայունց Թամարա,
Սազեդ սիմին կրոտը չըմ, լյավ ըսկաց,
Տոն ըմ քինամ, իմ հըղըցան ղրաղ կաց:


Ախչի լյավն ըս իմ սազի սոյբաթիցը,
Համա շատ ըմ վախում Մանաս դայուցը,
Ես մին տարե նոքյարմ իլալ ծեր տանը,
Քու հար ասալ ա՝ իրես չտաք էդ շանը:
Թա օզում ըս ինձ ձեր տոնը հարս տանիս,
Վախում ըմ, թա տանիս ետան փոշմանիս,
Իմ հար սար ա, տու էդ մինը գյիդամ աս,
Ընդրա կուղքեն տու կարել չըս տեմ կենաս:

Ախչի ինչ ես քյոյնա տերման քամուն տամ,
Ջոռավ ինչ ըս խամ եզանը սամուն տամ,
Ես գիդում ըմ՝ մտքումդ կա, եկ խոսք տանք,
Ետնան ուրուր ջան ասինք, ջան ըսկանանք:
Հենգ սըհաթ ա մինակ կանչում ում ղուղու,
Ծըրվեր յեշում ես մին սազ ածող տըղու,
Թա եփ կըկյա էս բաղումը խաղ կանչի,
Վեր իմ սերտս նրա սազան կյընանչի:

Էդ խոսքերը վեր ինձ ասից իմ փարիս
Ես գյիդացե գյուղյա դիբավ ջիգյարիս,
Դերունց բաղեն ծառը մին լյավ շուք ըրավ,

Խտտից յարս ինձ, իլալ ըր շատ ծարավ:
Էդ հունց էր վեր մին օր էլ դու քինացեր
Մեր պանիրն ու չուրաթանը կյուղացեր,
Իմ հար եկավ շանավ փատավ ու պերհավ
Աշկեդ տակեն մին մեծ փանար ցեց տիրավ:

Սերին մըհար հարուստ քյասիբ պեն չկա,
Հըվավատում չես, կա էս պաչը քեզ վկա,
Թա սիրում ըս, ինձ անիս վեչ դադարգյուն,
Խնդրում եմ, վեր Բագրատին տաս հանգիստ քուն:



30.

Գիշերը լուսյունգայա, ես հո՞ւնց կյամ,
Ծեր պառավն էլ մըռթմըռթամ ա, ես հո՞ւնց կյամ,
Ճըխարակն էլ ճռճռամ ա, ես հո՞ւնց կյամ,
Ծեր քյոփագն էլ փընթփընթամ ա, ես հո՞ւնց կյամ:


Գիշերը լուսյունգայա, ծառեն շոքավ եկ,
Մեր պառավն էլ մըռթմըռթամ ա, հացան թուղ ըրա եկ,
Ճըխարակն էլ ճռճռամ ա, եղան քսե եկ,
Մեր քյոփագն էլ փնթփնթամ ա, դըլվին տուր ու եկ:



31.

Մթեն ա, մթեն ա, մեր տըռանը ճոխտ թութենա,
Էն շան տղեն ըսեցեք, կյա կուրցըրածը քըթենա:
Մթեն ա, մթեն ա, մթնումը հո՞ւնց քըթենամ,
Տոշըտ մին սոթ պեց ըրա, յուսին յիրա քըթենամ:

Մթեն ա, մթեն ա, մեր տըռանը ճոխտ թութենա,
Սիրածն էնա սիրածեն աշկերը հոփ քըթենա:
Մթեն ա, մթեն ա, ծեր տռանը ճոխտ թութենա,
Ներակ տեսնամ էս քըշեր, մթնումը յուս քըթենամ:
Ախ, մթեն ա, մթեն ա...




32.

Գյուլ գյուլի

Արկանքը աղին յըրա,
Շամամը թաղին յըրա,
Ես մին թիթռա ղուշ պիտի
Իմ յարին բաղեն յըրա:
Սերալ ըմ սերի յըրա,
Էն սերուն ըխպրին յըրա,
Սերալ ըմ, պեց չըմ թողում,
Ըստուծեն սերն ա յըրա:

Մեր կրակը թեժ կանիմ,
Մեր օթաղը փարչ կանիմ,
Վըեր գյիդամ յարս կյամ ա,
Ճըրան ճըըրագ կանիմ:
Մեր արտումը հոնձ կանիմ,
Չինըս կտրե հունց կանիմ,
Վըեր յարս մըտես ընգնե,
Բա էն վախտը հո՞ւնց կանիմ:





33.

Պիծա ախչիգ

Ախչի, հի՞նչ ըս գիդացալ,
Վեր կիժված ըմ ես կացալ,
Վեր միշտ կիժված ես մնամ,
Սիպտակ տյոշդ ես բացալ,
Իմ սերտը դաղ ըս ըրալ,
Պիծյա աղջիկ համ օնիս:
Հյունձ ըմ ըրալ նըղացալ,
Կետն ըմ մտալ լըղացալ,
Օխտը օրվա հիվանդ ի,
Ծոցն ըմ մտալ սղացալ:

Ծոցդ վարդավ ըս լըցալ,
Սերտս դարդավ ըս լըցալ,
Էրկու օր ա տըսալ չում,
Կրակս էլ ծեզ քիչ ա,
Իմ սերտը դաղ ըս ըրալ,
Պիծյա աղջիկ համ օնիս:
Այ ախչի հաղ ըս ըրալ,
Ձիգյարս դաղ ըս ըրալ,
Սիպտակ մախմուր նռները
Ինձ հետի բաղ ըս ըրալ:


Ախ - չի, ին՞չ ըս գի - դա - ցալ, Վեր կիժ - ված ըմ ես կա - ցալ,
3
Վեր միշտ կիժ - ված ես մը - նամ, Միպ-տակ տյո-շըղ ես բա - ցալ,
5
Իմ սեր - տը դաղ ըս ը - րալ, Պի-ծյա աղ - ջիկ համ օ - նիս:
7
Հյունձ ըմ ը - րալ նըը-դա - ցալ, Կեսն ըմ մ - տալ լը-դա - ցալ,
9
Օխ - տը օր - վա հի-վանդ ի, Ծոցն ըմ մը-տալ սը-դա - ցալ:

34.


Ղարաբաղն արև ըրվանա,
Ամեն հուրթա ծոխ պիցրանա,
Բյուրդան թիլս տյուս չի քըցի,
Հանցու գյաբան վըխտեն կյործիմ:

Ասլան բալիս Աստված պահե,
Դուշմանին գյուլլան խափանե,
Բյուրդան թիլս տյուս չի քըցի,
Հանցու գյաբան վըխտեն կյործիմ:

Քասիբ մարդուն բախտը ծոռ ա,
Մին ճոթ հաց ճարելն զոռ ա
Բյուրդան թիլս տյուս չի քըցի,
Հանցու գյաբան վըխտեն կյործիմ:

.....


Լայ լայ անե իմ զավակը,
Աշկես լյուսն ու տանս բագը:



35.

Ղարաբաղը սարոտ ա,
Քարոտ ա, քըրքարոտ ա,
Մինակ քեզ անքար թողեց,
Կորած տեղդ արոտ ա,
Ջա՛ն, ջա՛ն:
Սիրտըս յաման յարոտ ա,
Աշքս յարին կարոտ ա,
Չիթ հալավը վեր հանից,
Տե՛ս, իմ ջանը խալոտ ա:
Ջա՛ն, ջա՛ն:

Մըր աշխարհքը ծաղկոտ ա,
Չորս ղոլը ծաղկի հոտ ա,
Քոնիլ երկաց, բախտ օզի,
Գեղեցկություն հի՞նչ պետ ա:
Ջա՛ն, ջա՛ն:
Աշխարհքիս սիրտը լեն ա,
Իրար չիլած լոխ էնա,
Սրտով սիրած յար ընի,
Հըրստություն սոթ պեն ա,
Վա՛յ, վա՛յ:



36.

Շուշվա կեղը լոխ բաղ ա,
Ջըմեր լիգյը ղայմաղ ա,
Ունքամեջդ պեց ըրա,
Քանի իմ ջանը սաղ ա:
Շուշվա բաղերին թոթը,
Ծըռերի տակին խոտը,
Ծառ էլ ինի, ծաղիկ էլ,
Օրիշ ա յարիս հոտը:

Աշունք ա, պտղաքաղ ա,
Օրախություն, ծիծաղ ա,
Եկ մեր բաղը հավուղ կեր,
Ջանս ջանիդ մատաղ ա:

Պռշներիդ էտ պաչը,
Կառնի մահին առաջը,
Ես մենակ քեզ ում սյուրում,
Սոտ չում ասում, էն խաչը:

Ղազանչեցոց մեծ ժամը,
Ծեռքեդ վռաղած շամը,
Խելքս կլխաս տանըմ ա,
Մեջքիդ տասներկու ծամը:
Մունք էրկուսըս մին վըեղա,
Սարերը սյարին տըեղ ա,
Ուրուր սիրինք ամեն օր,
Քանի ջընըրնիս սաղ ա:



Նոտագրված է «Նուբար» հայ ավանդական երգի-պարի անսամբլի կատարումներից:
Transcribed from Nubar Folk Ensemble's performances

1. **Արցախի խաղիկներ**
   (Գուրգեն Գաբրիելյան, Մարտակերտի հորովելի եղանակով)
2. **Ախճի տու վեր բաղան ըս**
   (Մարատ Հարությունյանից)
3. **Հըրսանեք**
4. **Հարսի գովք – Մեր ծորեն խնծյորին**
   (Գուրգեն Գաբրիելյան)
5. **Հեղինա**
   (Արտեմ Խաչատուր)
6. **Այան ըմ**
7. **Այան երգը**
   (Գուրգեն Գաբրիելյան)
8. **Տմբլաչի Խաչանը**
9. **Նախշուն աքիր**
10. **Նախշուն բաջի**
11. **Ես պար կըկյամ 14**
12. **Ժըղովուրդ պարավ ըք եկալ**
    (Արտեմ Խաչատուր, Ալեքսանդր Մանասյան)
13. **Տարան հայ – փըսամար տյուս եկ**
    (Մադլեն Ասրյանից)
14. **Մարտակերտի հորովել**
15. **Գութաներգ – Հոլել, հոլել**
16. **Կալին երգը**
17. **Ճըխարակ**
18. **Մանած թիլս**
    (Գրիգոր Սյունի)
19. **Գորգի երգ**
20. **Խնեցե**
21. **Արկանք**
22. **Հացթուխեն երգը**
23. **Այ տղա տղա**

24. **Օրորոցի երգ**
(Գուրգեն Գաբրիելյան)

25. **Աքիշ, աքիշ**

26. **Պապալ պապալ – Ձափիկ ձափիկ ձիրանիկ**

27. **Ձան գյուլում**

28. **Դեհոյ նանայ**

29. **Դերունց ծյորում**
(Աշուղ Բագրատ)

30. **Գիշերը յուսունգայա**

31. **Մթեն ա**
(Գուրգեն Գաբրիելյան)

32. **Գյուլ գյուլի**
(Ռոմանոս Մելիքյան)

33. **Պիծա ախչիգ**
(Մարատ Հարությունյանից)

34. **Ղարաբաղն արև ըրվանա**
(Մարատ Հարությունյանից)

35. **Ղարաբաղը սարոտ ա**
(Մարատ Հարությունյանից)

36. **Շուշվա կեղը**
(Մարատ Հարությունյանից)

Բռնենք ճամփան Արցախի
«Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբ
Գեղարվեստական ղեկավար՝ Լուսինե Նազարյան

Ձայնագրումը և համադրումը՝ Գևորգ Շահնազարյանի
Գրաֆիկ դիզայներ՝ Մանե Խաչատրյան
Լուսանկարները՝ Տիգրան Ապիկյանի, Գարեգին Աղաբեկյանի,
Տիգրան Մադոյանի
Թարգմանիչ և սրբագրիչ՝ Մարինե Հարությունյան
Նախագծի համակարգող՝ Գայանե Խաչատրյան
Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Յարութիւնեան

Կազմի ներսի նկարը՝ Դադիվանքի որմնանկարներից (9-13 դդ.)
Կազմի դարձերեսին՝ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց
եկեղեցու 4 պահապան հրեշտակներից մեկն է:

© Ⓟ «Նարեկացի» արվեստի միություն, Երևան, 2026
© «Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբ, 2026

Taking the Path to Artsakh
Nubar Folk Ensemble
Artistic Director: Lusine Nazaryan

Recording and Mixing by Gevorg Shahnazaryan
Graphic Designer: Mane Khachatryan
Photos by Tigran Apikyan, Garegin Aghabekyan and Tigran Madoyan
Translation and proofreading by Marine Harutyunyan
Project Coordinator: Gayane Khachatryan
Executive Producer: Nareg Hartounian

Inside cover: a fresco from Dadivank Monastery (9th - 13th cc.)
Back cover: one of the four guardian angels of the Holy All
Savior Ghazanchetsots Church of Shoushi

© Ⓟ Naregatsi Art Institute, Yerevan, 2026
© Nubar Folk Ensemble, 2026



Սկանավորեք QR կոդը՝ երգերը լսելու համար
Scan the QR code to listen to the songs

ISBN 978-9939-9351-2-6
ISMN 979-0-69380-485-6